եւ զպատրիգին գործ միրիին, և վճարումն ի Զատիկ որ ի Թէքիրտաղ։ Ի Պուրսայ էնկիչէր աղասու գլուխն պատռելն ի խենթից վէզիրին։

Աւագ Բշի (16 Ապրիլ) *առաւօտու ելաք յէտրէնու. երեկոյին ի Հավսայու ելաք մտաք ի Պապա Է ժամու և անտի ի գիշերի երեկոյին ի Ղարաղարլըն Ե ժամու, առաւօտու Դշի* (18 Ապրիլ) *ի Թէքիրտաղ։*

Թվին ՌՃԹ Ապրիլի ԻԲ և լուսնին ԻԲ եղև Զատիկն սուրբ, յորում աւուր կայր ննջեցեալ քահանայ մի արժանաւոր որ ի Շաբաթի աւուր հանգուցեալ էր և բերեալ քահանայիցն երեկոյին յեկեղեցի։ Եւ սկսաք պաշտել զկարգ հրաշափառ Յարութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ և զկարգ թաղման քահանային Թորոսի՝ մինչեւ ցերրորդ ժամ աւուրն, եւ ապա արձակեալ զժողովուրդն, կէս մի ընդ քահանային գնացին ի թաղում և կէս մի ընդ մեզ ի սեղան նստան։

Նոյնպէս և յերկրորդում աւուր մեռելոցի (23 Ապրիլ) *գնացաք ի զերեզմանս բնակչաց տեղոյն, և զայդուցն կատարեալ իրիցուն այնմ, և մեծաւ պատվով ի պարտէզն չրջագայեալ ի խնդրոյ մեծամեծաց նոցունց։*

Եւ Դշի աւուր (25 Ապրիլ) *հազիւ պրծեալ ի նոցունց՝ հրաժարեցաք և մտաք ի նաւ ի հասարակել աւուրն։*

Եւ Եշի աւուր (26 Ապրիլ) *հասաք ի մեծապանծ քաղաքս, և յոյժ մառախուղ պատեալ էր որ բնաւ պարիսպքն ևս ոչ երևէր։ Եւ տեսաք զՂալաթայ քաղաքն, որ հանդէպ մեծ քաղաքին կայ ամենայն տամբ և չուկայիւք, մէյխանօք և պէզէստանօք և եկեղեցօք և պալատովք վաղաշինօք, որ ասացին զամենայն Հ և Ե թաղք գոլ, Հ այրեալ և Ե ապա մնացեալ մեր Լուսաւորչի Հայոց եկեղեցոյն։ Իսկ Յունաց այ-*